1.8. **Հասանելիության ժամանակահատված՝** սահմանափակ ժամկետ, որի ընթացքում Օգտատերը կարող է օգտագործել Դասընթացի ֆունկցիոնալը:
1.9. **Օգտատեր՝** Պատվիրատու կամ այլ ֆիզիկական անձ, ով ստացել է առցանց հասանելիություն: Պատվիրատուն կամ Օգտատիրոջ օրինական ներակայացուցիչը պարտավոր է օժանդակել Օգտատիրոջը ծրագրային օապահովման օգտագործման հարցում:
1.10. **Ծրագրային ապահովում՝** Կատարողին պատկանող ծրագրային ապահովում:
1.11. **Մաս-մաս վճարում՝** վճարման եղանակ, որի դեպքում ծառայությունների վճարումն իրականացվում է ըստ Հաշվում նշված վճարման գրաֆիկի:
1.12. **Կայք՝** Կատարողի սեփականությունը հանդիսացող տեղեկատվության, գրաֆիկական տարրերի, դիզայնի պատկերների, հեղինակային տեքստային նյութերի (տեքստերի), տեսալսողական նյութերի և մտավոր գործունեության այլ արդյունքների ամբողջություն, ինչպես նաև համակարգչային ծրագրերի խումբ, որոնք ներառված են տեղեկատվական համակարգում և ապահովում են այդ տեղեկատվության մատչելիությունը համացանցում `lerna.am դոմեյային անվանմամբ, ներառյալ դրա բոլոր բաժինները, էջերը (ենթադոմենները), ինչպես նաև ֆայլային կառուցվածքը և ցանկացած այլ կառուցվածքային տարրեր, սկզբնական և օբյեկտային կոդը: Կայքը հանդիսանում է Ծրագրային ապահովման մաս:

1.13. **Հաշիվ**՝ հաշիվ կամ հաշիվ-ապրանքագիր կամ այլ նմանատիպ Փաստաթուղթ, որով կարգավորվում է ծառայությունների արժեքը և, անհրաժեշտության դեպքում, վճարման կարգը և վճարման գրաֆիկը՝ մաս-մաս վճարման պարագայում:
1.14. Սույն Պայմանագրում օգտագործված բոլոր տերմիններն ու սահմանումները հավասարապես կիրառվում են եզակի և հոգնակի տերմինների նկատմամբ:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Պայմանագիրը համարվում է հրապարակային պայմանագիր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդված, հետագայում՝ «ՔՕ»), իսկ Կատարողի կայքում Պայմանագրի տեքստի տեղադրումը ՔՕ 453-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն հանդիսանում է Կատարողի հրապարակային առաջարկ (օֆերտա):
2.2. Սույն Պայմանագրի կնքումը կատարվում է Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրին միանալով, այսինքն. Պատվիրատուի կողմից սույն Համաձայնագրի պայմաններն ամբողջությամբ ընդունելու միջոցով՝ առանց որևէ պայմանի, բացառության և վերապահումների (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդված):
2.3. Պայմանագրի պայմանները Հաճախորդի կողմից ընդունելու (ակցեպտի) փաստը հանդիսանում է՝
2.3.1. Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումը Պատվիրատուի կողմից՝ Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով,
2.3.2. Պատվիրատուի կողմից վարկային պայմանագրի կնքումը՝ Կատարողի ծառայությունների վճարման նպատակով,
2.3.3. Առաջին վճարման կատարումը՝ մաս-մաս վճարման պայմաններով ծառայությունների դիմաց վճարման դեպքում,
2.3.4. Նովացիա:
2.4. Պայմանագիրը, եթե պահպանված է դրա ընդունման կարգը, համարվում է կնքված պարզ գրավոր ձևով (ՔՕ 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր, 454-րդ հոդվածի 3-րդ կետ):
2.5. Կողմերը Պայմանագրի կնքման վայր են համարում Կատարողի գտնվելու վայրը:
2.6. Պայմանագրի կնքման ամսաթիվ է համարվում Պայմանագրի ակցեպտի ամսաթիվը:

3. Պայմանագրի առարկան

3.1. Ըստ Պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է տրամադրել առցանց հասանելիություն Ծրագրային ապահովմանը Օգտատիրոջը, ներառյալ Դասընթացին (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց:
3.2. Դասընթացի անվանումը և ծրագիրը, Հասանելիության ժամկետը, Ծառայությունների արժեքը Կատարողի կողմից նշվում են Կայքում:
3.3. Օգտատիրոջ պահանջով Կատարողը կարող է տրամադրել նրան առցանց հասանելիություն Դասընթացին / Դասընթացի առանձին Մոդուլներին / թարմացնել Դասընթացի նյութերը Հասանելիության ժամկետի ավարտից հետո՝ առանձին պայմանագրի կնքմամբ և վճարովի հիմունքներով: Նման պայմանագիր կնքվում է՝ Կատարողի տեխնիկական և իրավական հնարավորությունների առկայության դեպքում:
3.4. Ծրագրային ապահովման ֆունկցիոնալը Պայմանագրի նպատակներով կարող է ներառել՝՝
3.4.1. Օգտատիրոջ գրանցում և նույնականացում Ծրագրային ապահովման հետ աշխատելիս:
3.4.2. Դասընթացների որոնման հնարավորություն տեքստային հարցման և / կամ պարամետրերի բազմության ֆիլտրացիայի միջոցով:
3.4.3. Ծրագրային ապահովման մեջ տեղադրված Դասընթացի ընդլայնված նկարագրության դիտման հնարավորություն:
3.4.4. Անձնական հաշիվ մուտք գործելու և դրա ֆունկցիոնալից օգտվելու հնարավորություն:
3.4.5. Դասընթացի տեսական նյութերի դիտման հնարավորություն:
3.4.6. Օգտատիրոջ գործնական աշխատանքները Օգտատիրոջ Անձնական օգտահաշվի հատուկ ինտերֆեյսում բեռնելու հնարավորություն:
3.4.7. Մասնակցություն բոնուսային ծրագրին՝ Կատարողի կողմից սահմանված պայմաններով և կարգով:
3.4.8. Օգտատիրոջ առաջադիմության ավտոմատ ագրեգացիա և Օգտատիրոջ կողմից Դասընթացի ավարտի հաստատում՝ հավաստագիրն ավտոմատ գեներացնելու հնարավորությամբ:
3.5. Կատարողը իրավասու է սահմանել Ծրագրային ապահովման ֆունկցիոնալ բնութագրերը, ինչպես նաև իրավունք ունի փոփոխություններ կատարել դրանում՝ այն ձևափոխելու, արդիականացնելու, փոխարկելու կամ այլ եղանակներով:
3.6. Կատարողը Պատվիրատուին և / կամ օգտատիրոջը չի տրամադրում անհատական խորհրդատվություն, որը կապված չէ Պայմանագրի առարկայի հետ:

4. Ծառայությունների մատուցման ժամկետները

4.1. Կատարողը Օգտատիրոջը տրամադրում է Առցանց հասանելիություն՝ ոչ ուշ քան Պայմանագրի կնքումից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Կատարողի հայեցողությամբ Առցանց հասանելիության տրամադրման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 (տաս) աշխատանքային օր:
4.2. Ծառայությունների մատուցման ամսաթիվը համարվում է Օգտատիրոջը Առցանց հասանելիության տրամադրման օրը:
4.3. Կատարողի պարտավորությունները՝ Օգտատիրոջը Առցանց հասանելիություն տրամադրելու վերաբերյալ, համարվում են կատարված Պատվիրատուի հանդեպ՝ անկախ նրանից՝ Օգտատերը գրանցված է Անձնական հաշվում և / կամ փաստացի օգտվում է Ծրագրային ապահովումից:

5. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

5.1. Կատարողը պարտավորվում է՝
5.1.1. տրամադրել Առցանց հասանելիություն:
5.1.2. իրականացնել տեղեկատվական աջակցություն Պատվիրատուին և / կամ Օգտատիրոջը՝ Ծառայությունների մատուցման և / կամ Ծրագրային ապահովման, այդ թվում՝ Դասընթացին, աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչև 18:00 (ուրբաթ օրերին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կրճատված աշխատանքային օրերին՝ մինչև 17:00): Հարցերը պետք է ուղարկվեն էլեկտրոնային հասցեով՝ support@lerna.team:
5.1.3. Շտկել Ծրագրային ապահովման աշխատանքի ընթացքում հայտնաբերված սխալները / խախտումները, որոնք կատարվել են Կատարողի կողմից կամ նրա մեղքով:
5.2. Կատարողն իրավունք ունի՝
5.2.1. կատարել փոփոխություններ Ծրագրային ապահովման և Դասընթացի բովանդակության մեջ (ամբողջությամբ կամ մասամբ)՝ առանց Պատվիրատուի և / կամ Օգտատիրոջ համաձայնության:
5.2.2. ներգրավել երրորդ կողմերին Պայմանագիրը կատարելու համար՝ առանց Պատվիրատուի և / կամ Օգտատիրոջ համաձայնության:
5.2.3. Պատվիրատուից և / կամ Օգտատիրոջից պահանջել տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարման համար:
5.2.4. փոխել Ծառայությունների արժեքը՝ հրապարակելով գործող արժեքը կայքում, միևնույն ժամանակ, արդեն վճարված Առցանց հասանելիության դեպքում արժեքի փոփոխությունը չի իրականացվում:
5.2.5. ժամանակավորապես դադարեցնել Ծրագրային ապահովման աշխատանքը՝ Կատարողի տեխնիկական ռեսուրսներում անհրաժեշտ պլանային կանխարգելիչ և վերանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով:
5.2.6. փոխարինել երրորդ կողմերին, որոնք ներգրավված են Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար:
5.2.7. օգտագործել Պատվիրատուի և / կամ Օգտատիրոջ՝ Կատարողի և նրա մատուցած Ծառայությունների վերաբերյալ կարծիքները, որոնք տեղադրված են համացանցում, այդ թվում՝ Կատարողի պաշտոնական խմբերում, սոցիալական ցանցերում, առանց Պատվիրատուի ամբողջական անունը (ազգանուն, անուն և հայրանուն) նշելու և առանց Պատվիրատուի լուսանկարը օգտագործելու ցանկացած ձևով, ներառյալ, բայց ոչ սահմանափակվելով՝ վերամշակմամբ, այդ թվում՝ կրճատմամբ, փոփոխմամբ, առանց իմաստը խեղաթյուրելու, ինչպես նաև ներառել վերոնշյալ կարծիքները Կատարողի հաճախորդներին ուղարկվող տեղեկատվական հաղորդագրությունների տեքստերում:
5.3. Պատվիրատուն պարտավորվում է՝
5.3.1. վճարել Ծառայությունների դիմաց՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում և պայմաններով:
5.3.2. ժամանակին տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկատվություն, որը անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման համար (այդ թվում՝ գրանցման ժամանակ):
5.3.3. օգտագործել կամ ապահովել Օգտատիրոջ կողմից Ծրագրային ապահովման ֆունկցիոնալի և Դասընթացի Առցանց հասանելիության օգտագործումը բացառապես ոչ առևտրային նպատակներով:
5.3.4. ապահովել Առցանց հասանելիության և Նույնականացման տվյալների գաղտնիությունը, չփոխանցել դրանք երրորդ անձանց, որոնք Պայմանագրով Օգտատեր չեն հանդիսանում:

5.3.5. Նույնականացման տվյալների կորստի դեպքում, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Առցանց հասանելիության ապօրինի ստացման դեպքերում, Պատվիրատուն և / կամ Օգտատերը պարտավորվում են անհապաղ տեղեկացնել այդ մասին Կատարողին՝ ուղարկելով ծանուցում հետևյալ էլ. հասցեին՝ support@lerna.team: Մինչ նշված ծանուցման ուղարկումը բոլոր գործողությունները համարվում են կատարված Պատվիրատուի և / կամ Օգտատիրոջ կողմից:
5.3.6. չտեղադրել Օգտատիրոջ անձնական տվյալները Կայքում կամ արտաքին հարթակներում, ներառյալ՝ Նույնականացման տվյալները, չօգտագործել և չփորձել ձեռք բերել այլ օգտատերերի անձնական տվյալները, ինչպես նաև ապահովել Օգտատիրոջ կողմից սույն պարտավորության կատարումը:
5.3.7. ապահովել Պատվիրատուի և / կամ Օգտատիրոջ կողմից էթիկական նորմերի պահպանումը՝ Ծրագրային ապահովման, Դասընթացի հետ աշխատելիս, ինչպես նաև համացանցում տարբեր հարթակներում Ծրագրային ապահովման և / կամ Դասընթացի նյութերի և / կամ Կատարողի վերաբերյալ քննարկումների ընթացքում: Մասնավորապես՝ զերծ մնալ ընդհանուր չաթերում Դասընթացի թեմատիկային չվերաբերվող հաղորդագրություններ (ֆլուդ) գրելուց, հարգալից վերաբերմունք ունենալ մյուս օգտատերերի, հրավիրված փորձագետների, երրորդ անձանց և Կատարողի աշխատակիցների հանդեպ, խուսափել վիրավորական արտահայտություններից:
5.3.8. չօգտագործել ծրագրային ապահովում կամ այլ միջոցներ՝ Կատարողի Ծրագրային ապահովման մեջ տեղադրված տեղեկատվությանը կամ Առցանց հասանելիությանը չարտոնված մուտք գործելու նպատակով, ինչպես նաև՝ այդ տեղեկատվության հավաքագրման, ոչնչացման, արգելափակման, փոփոխման, պատճենահանման, տարածման կամ Ծրագրային ապահովման նկատմամբ որևէ այլ ապօրինի գործողության իրականացման նպատակով:
5.3.9. ապահովել սեփական սարքավորումների համապատասխանությունը ծրագրային և տեխնիկական պահանջներին, ինչպես նաև՝ ինտերնետ կապի թողունակության պահանջներին, եթե այդպիսիք սահմանված են:

5.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

5.4.1. ստանալ տեղեկատվական աջակցություն՝ Ծառայությունների մատուցման կարգի և Ծրագրային ապահովման աշխատանքի հետ կապված հարցերով Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:
5.4.2. Կատարողից պահանջել տեղեկատվություն, որը վերաբերում է Օգտատիրոջ Առցանց հասանելիությանը, ինչպես նաև Անձնական հաշվում արտացոլվող տվյալներին:
5.4.3. Կատարողին ուղարկել դիտողություններ, առաջարկություններ և / կամ արձագանքներ, որոնք առնչվում են Պայմանագրի առարկային և / կամ Ծրագրային ապահովման աշխատանքին:

6. Ծառայությունների արժեքը և վճարման կարգը

6.1. Ծառայությունների արժեքը նշվում է Կայքում և / կամ Հաշվում:
6.2. Ծառայությունների արժեքը չի ներառում ԱԱՀ:
6.3. Պատվիրատուն վճարում է Ծառայությունների դիմաց՝ 100% կանխավճարի եղանակով՝ Կատարողի հաշվեհամարին դրամական միջոցների փոխանցման միջոցով՝ Կայքում նշված եղանակներով: Վճարման և գումարի վերադարձի մանրամասն կանոնները ներկայացված են սույն Պայմանագրի Հավելված 1-ում:
6.4. Պատվիրատուն կարող է վճարել Կատարողի Ծառայությունների դիմաց՝ օգտագործելով վարկային պայմանագրով տրամադրված միջոցներ: Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուին վարկ տրամադրելու պայմանների, ինչպես նաև վարկ տրամադրելուց հրաժարվելու համար:
6.5. Վճարման ամսաթիվ է համարվում Կատարողի հաշվեհամարին դրամական միջոցների մուտքագրման օրը:

7. Կողմերի պատասխանատվությունը: Պատասխանատվության սահմանափակում

7.1. Պայմանագրով սահմանված մտավոր սեփականության իրավունքներին (Պայմանագրի 9-րդ բաժին) կամ Դասընթացի նյութերին Առցանց հասանելիությունը երրորդ անձանց չտրամադրելու պարտավորությանը (Պայմանագրի 5.3.4 ենթակետ) վերաբերվող պայմանները խախտելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է՝ Կատարողի գրավոր պահանջով, դատարանից դուրս վճարել տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամի չափով:
7.2. Պայմանագրի պայմանների խախտման դեպքում Պատվիրատուի (իսկ կիրառելի դեպքերում՝ նաև Օգտատերերի) կողմից՝ Կատարողը իրավունք ունի ապաակտիվացնել Առցանց հասանելիությունը, ինչպես նաև արգելափակել Անձնական հաշիվը՝ առանց Պատվիրատուին արդեն վճարված գումարները վերադարձնելու:
7.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում՝

7.3.1. մեսենջերների (ներառյալ, բայց ոչ սահմանափակվելով՝ WhatsApp, Viber, Telegram) չաթերում տեղադրված տեղեկատվության բովանդակության համար, եթե այդ չաթերը ստեղծվել են երրորդ անձանց և / կամ Պատվիրատուի և Օգտատերերի նախաձեռնությամբ, ինչպես նաև՝ այն անձնական տվյալների օգտագործման համար, որոնք Պատվիրատուն ինքն է տրամադրել նման չաթերում:
7.3.2. ցանկացած տեսակի վնասի համար, որը կրում է Պատվիրատուն՝ Նույնականացման տվյալների կորստի և / կամ արտահոսքի հետևանքով:
7.3.3. ինտերնետ կապի որակի, ինչպես նաև Պատվիրատուի և (կամ) Օգտատերերի սարքավորումների և ծրագրային ապահովման աշխատանքի համար:
7.3.4. Պատվիրատուի և / կամ Օգտատերերի սարքավորումների տեխնիկական բնութագրերի՝ Ծրագրային ապահովումը օգտագործելու և / կամ Դասընթացի նյութերը վերարտադրելու համար սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում:
7.3.5. Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված Ծառայությունների վճարման համար ընտրված վճարման եղանակի օգտագործման (կամ օգտագործման անհնարինության), ինչպես նաև դրա հետևանքների համար, ներառյալ՝ վճարումների գործընթացում ներգրավված բանկերի կամ երրորդ անձանց գործողությունների (կամ անգործության) համար:
7.3.6. Ծառայությունների՝ Պատվիրատուի ակնկալիքներին չհամապատասխանելու դեպքում:
7.4. Կատարողը գործադրում է ողջամիտ ջանքեր՝ Ծրագրային ապահովման աշխատանքի խափանումներն ու անսարքությունները կանխելու համար, սակայն չի երաշխավորում դրա անխափան աշխատանքը, պատասխանատվություն չի կրում և չի փոխհատուցում վնասները, որոնք առաջացել են այն ծառայությունների (հատկապես՝ տվյալների փոխանցման ծառայությունների) անբավարար որակի հետևանքով, որոնք անհրաժեշտ են Առցանց հասանելիության ապահովման համար, եթե այդ ծառայությունները տրամադրվում են երրորդ անձանց կողմից, որոնք Կատարողի կողմից չեն ներգրավված:

8. Ֆորս-մաժոր

8.1. Կողմերից մեկի մոտ ֆորս-մաժորային հանգամանքների (անհասկանալի, չկառավարվող, չկանխատեսվող և չհաղթահարվող) առաջացման դեպքում, որոնց հետևանքով Կողմերը չեն կարող կատարել Պայմանագրով իրենց պարտավորությունները, Կողմերից և ոչ մեկը պատասխանատվություն չի կրում այդ պարտավորությունները չկատարելու համար, և այդ պարտավորությունների կատարումը հետաձգվում է ֆորս-մաժորային հանգամանքների գործողության ամբողջ ժամանակահատվածով:
8.2. Եթե ֆորս-մաժորային հանգամանքների բնույթն ու տևողությունը ոչ նպատակահարմար են դարձնում Պայմանագրով պարտավորությունների հետագա կատարումը որևէ Կողմի համար, ապա Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

9. Մտավոր սեփականություն: Գաղտնիություն: Անձնական տվյալներ

9.1. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման շրջանակներում Պատվիրատուին և / կամ Օգտատերերին տրամադրվում է հասանելիություն Կատարողի և / կամ երրորդ անձանց մտավոր սեփականությանը, որոնց հետ Կատարողը կնքել է համապատասխան պայմանագրեր / համաձայնագրեր:
9.2. Պատվիրատուն և / կամ Օգտատերը պարտավոր են՝
9.2.1. ձեռնպահ մնալ ցանկացած գործողությունից, որը խախտում է Կատարողի և / կամ երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքները, մասնավորապես՝ չպատճենել, չգրանցել, չվերարտադրել, չտպագրել, չտարածել որևէ ձևով, չվերափոխել, չօգտագործել որևէ մտավոր սեփականություն ածանցյալ ստեղծագործություններ ստեղծելու նպատակով:
9.2.2. անմիջապես տեղեկացնել Կատարողին մտավոր սեփականության իրավունքի ցանկացած հայտնի խախտման մասին:
9.3. Պատվիրատուն և / կամ Օգտատերերը պարտավորվում են չբացահայտել երրորդ անձանց այն Գաղտնի տեղեկատվությունը, որը հայտնի է դարձել Ծառայությունների մատուցման ընթացքում (բացառությամբ հանրամատչելի տեղեկատվության)՝ առանց Կատարողի նախնական գրավոր համաձայնության:
9.4. Կատարողը իրավունք ունի օգտագործելու իր մարքեթինգային և (կամ) գովազդային նյութերում այն օբյեկտները, որոնք ստեղծվել են Օգտատիրոջ կողմից Դասընթացն անցնելու ընթացքում:
9.5. Պատվիրատուն Կատարողին փոխանցում է Օգտատիրոջ անձնական տվյալները պայմանագրի կատարման շրջանակներում և հաստատում է, որ Կատարողի կողմից Պատվիրատուի տրամադրած անձնական տվյալների մշակումն ըստ Պայմանագրի չի հանգեցնի անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության խախտման:

10. Պայմանագրի գործողության ժամկետը: Վեճերի կարգավորում

10.1. Պայմանագիրը համարվում է կնքված այն պահից, երբ Պատվիրատուն կատարում է Պայմանագրի 2.3 կետով նախատեսված գործողությունները, և ուժի մեջ է մնում մինչև Կողմերի կողմից իրենց պարտավորությունների կատարման պահը:
10.2. Կատարողն իրավունք ունի փոփոխել Պայմանագրի պայմանները, ավելացնել նոր պայմաններ կամ հավելվածներ առանց Պատվիրատուին նախապես տեղեկացնելու: Պատվիրատուն, իմանալով նման փոփոխությունների հնարավորության մասին, համաձայնում է, որ դրանք կարող են իրականացվել: Եթե Պատվիրատուն չի լուծում Պայմանագիրը, այդ թվում՝ շարունակում է օգտվել Ծրագրային ապահովումից վերոնշյալ փոփոխություններից հետո, դա ենթադրում է նրա համաձայնությունը այդ փոփոխություններին:
10.3. Պայմանագրի փոփոխությունների և / կամ լրացումների տեքստը, կամ Պայմանագրի նոր խմբագրությունը Կատարողի կողմից հրապարակվում է Կայքում համապատասխան ծանուցման տեղադրմամբ:
10.4. Կողմերը անվերապահորեն ընդունում են, որ լռությունը (գրավոր ծանուցման բացակայությունը Պայմանագրի առանձին դրույթների, այդ թվում՝ սակագների փոփոխությունների հետ չհամաձայնելու մասին) համարվում է Պատվիրատուի համաձայնություն և միացում Պայմանագրի նոր խմբագրմանը (ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 3-րդ կետի):
10.5. Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
10.6. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:
10.7. Կողմերի միջև կարող են առաջանալ վեճեր, պահանջներ և անհամաձայնություններ, որոնք լուծվում են բանակցությունների միջոցով:
10.8. Եթե վեճերը չեն կարգավորվում բանակցությունների միջոցով, Կողմերը դիմում են դատարան՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգի՝ պարտադիր դատական նախնական կարգով վեճը կարգավորելու պահանջով:
10.9. Պայմանագրի շրջանակներում ունեցած պահանջների առկայության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողին ուղարկել ստորագրված դատական նախապատրաստական պահանջ՝ Կատարողի Պայմանագրում նշված փոստային հասցեով: Պատասխանի տրամադրման ժամկետը՝ Կատարողի կողմից պահանջը ստանալու օրվանից 14 օր է:
10.10. Կողմերն ընդունում են, որ էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով կամ Անձնական հաշվի միջոցով ուղարկված փաստաթղթերը ունեն իրավական ուժ:

11. Կատարողի ռեկվիզիտները

«ԲՐԵՅՆԱՔԻԼՍ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00235569
Իրավաբանական հասցե՝ 0054, ՀՀ, ք.Երևան,
Փիրումյաններ 4/3, գրասենյակ 12
Գործունեության (փոստային) հասցե՝ ՀՀ,
ք.Երևան, Շինարարների 6/1, «ԳԱՐԱՆՏ»
բիզնես կենտրոն, 2-րդ հարկ, 29-րդ տարածք
Բանկային տվյալներ՝
«Ամերիաբանկ» ՓԲԸ h/h դրամով՝
1570075460860100
SWIFT: ARMIAM22

Հավելված 1
Վճարովի ծառայությունների մատուցման հրապարակային պայմանագրի

Վճարման և գումարի վերադարձի կանոններ

Սույն Վճարման և գումարի վերադարձի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) կարգավորում են Կատարողի և Պատվիրատուի միջև առաջացող իրավահարաբերությունները, որոնք կապված են Պայմանագրի շրջանակներում Ծառայությունների վճարման և գումարի վերադարձի հետ:

1. Ծառայությունների վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ Պատվիրատուի ընտրությամբ՝ Կայքում նշված եղանակներից որևէ մեկով՝ Կատարողի հաշվին գումարի մուտքագրման եղանակով:

2. Կայքում կամ Անձնական հաշվի միջոցով վճարելիս վճարման համար ընդունվում են VISA, MasterCard քարտեր: Վճարումները կատարվում են Visa և MasterCard միջազգային վճարային համակարգերի (այսուհետ՝ վճարային համակարգեր) կանոններին համապատասխան՝ փակ կապուղիներով գաղտնիության և անվտանգության սկզբունքների պահպանմամբ: Ինչ վերաբերում է վճարային համակարգերով վճարումներ կատարելու կանոններին և կարգին, ապա Հաճախորդը առաջնորդվում է համապատասխան վճարային համակարգերի կանոններով և պարզաբանումների և խորհրդատվության համար դիմում է անմիջապես համապատասխան վճարային համակարգերի օպերատորներին: Կատարողը սույնով իրեն իրավունք է վերապահում տրամադրել տեղեկատվական աջակցություն իր իրավասության ներքո գտնվող վճարային համակարգերի օգտագործմամբ ծառայությունների վճարման վերաբերյալ, սակայն սույն հավելվածում ոչինչ չի պարտավորեցնում նրան տրամադրել նման տեղեկատվական աջակցություն, պատասխանատվություն կրել տրամադրված տեղեկատվության ամբողջականության համար կամ կրել այլ հետևանքներ: Հաճախորդի կողմից ծառայությունների և (կամ) վճարային համակարգի վճարման եղանակի ընտրություն:

3. Բանկային քարտով ծառայությունների համար վճարման նպատակով Ծառայությունը պետք է պատվիրել հետևյալ եղանակներից մեկով՝ զանգել կոնտակտային հեռախոսահամարով կամ թողնել հայտ Կայքում: Կատարողը կուղարկի հղում Պատվիրատուին պատվերի վճարման համար:

4. Վճարումը կատարվում է վճարային համակարգի օպերատորի և / կամ համապատասխան բանկի անվտանգ վճարային էջ վերահասցեավորվելուց հետո՝ բանկային քարտի տվյալները մուտքագրելու համար: Վճարման էջի հետ կապը և տեղեկատվության փոխանցումն իրականացվում է անվտանգ ռեժիմով՝ օգտագործելով 3D Secure տեխնոլոգիան:

Բանկային քարտի տվյալները մուտքագրելու էջում Հաճախորդը պետք է մուտքագրի բանկային քարտի տվյալները՝ քարտի համարը, քարտատիրոջ անունը, քարտի գործողության ժամկետը, անվտանգության եռանիշ ծածկագիրը (CVV2 VISA-ի համար կամ CVC2 MasterCard-ի համար): Անվտանգության եռանիշ կոդը քարտի հետևի մասում նշված երեք թվանշաններն են: Եթե Հաճախորդի բանկը աջակցում է MasterCard SecureCode-ին, որը հաստատված է Visa անվտանգ առցանց վճարման տեխնոլոգիայով, վճարումը կատարելու համար կարող է պահանջվել հատուկ գաղտնաբառ:

5. Պատվիրատուի բանկային քարտի տվյալները չեն պահպանվում Կատարողի սերվերում կամ Կայքում, և Կատարողը չունի հասանելիություն Պատվիրատուի տվյալներին: Պատվիրատուի կողմից ներկայացված տեղեկատվության, ներառյալ՝ անձնական տվյալների և քարտային տվյալների գաղտնիությունը ապահովվում է համապատասխան վճարային համակարգի օպերատորի և / կամ Պատվիրատուի բանկի կողմից: Պատվիրատուի մուտքագրած տեղեկատվությունը, այդ թվում՝ բանկային քարտի տվյալները, չեն տրամադրվում երրորդ անձանց՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6. Վճարման իրականացումը կարող է մերժվել բանկի կողմից հետևյալ դեպքերում՝

6.1. Բանկային քարտը նախատեսված չէ համացանցի միջոցով վճարումներ կատարելու համար: Այս մասին տեղեկատվություն ստանալու համար Պատվիրատուն կարող է դիմել սպասարկող բանկին:

6.2. Բանկային քարտի հաշվին բավարար միջոցների բացակայություն: Միջոցների առկայության վերաբերյալ մանրամասները Պատվիրատուն կարող է պարզել քարտը տրամադրած բանկում:

6.3. Բանկային քարտի տվյալները սխալ են մուտքագրվել:

6.4. Բանկային քարտի գործողության ժամկետը լրացել է: Քարտի գործողության ժամկետը, որպես կանոն, նշված է քարտի դիմային մասում: Գործողության ժամկետի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն Պատվիրատուն կարող է ստանալ՝ դիմելով քարտը տրամադրած բանկին:

7. Apple Pay-ի միջոցով (եթե նման տարբերակը հասանելի է Կայքում) վճարելիս անհրաժեշտ է ընտրել քարտը «Wallet» հավելվածից, ապա օգտվել գաղտնաբառից կամ այլ նույնականացման եղանակից՝ կախված հավելվածով սահմանված մեթոդից:

8. Samsung Pay-ի միջոցով (եթե նման տարբերակը հասանելի է Կայքում) վճարելիս անհրաժեշտ է սեղմել «Վճարել Samsung Pay»-ով, մուտքագրել Samsung Account-ը և հաստատել գնումը սմարթֆոնում (մատնահետքի, աչքի ցանցենու կամ Samsung Pay PIN կոդի միջոցով):
9. Կատարողը չի վերահսկում վճարային համակարգի և / կամ բանկի ծրագրային և տեխնիկական ապահովումը: Եթե որևէ սխալի արդյունքում տեղի է ունեցել Պատվիրատուի միջոցների գանձում, սակայն վճարումը չի հաստատվել վճարային համակարգի և / կամ բանկի կողմից, ապա գումարի վերադարձման պարտականությունը ընկնում է վճարային համակարգի օպերատորի և / կամ համապատասխան բանկի վրա:
10. Պատվիրատուի կողմից վճարված գումարի վերադարձ կարող է իրականացվել հետևյալ դեպքերում՝
10.1. Ծառայությունը չի տրամադրվել սահմանված ժամկետում՝ Կատարողի մեղքով:
10.2. Պատվիրատուն Ծառայության մեկնարկից առաջ դիմել է Պայմանագրից հրաժարվելու և գումարի վերադարձի վերաբերյալ ծանուցմամբ:
10.3. այն դեպքերում, որոնք նշված են Կանոնների 14-րդ կետում:
11. Պատվիրատուի կողմից վճարված գումարի ամբողջական կամ մասնակի վերադարձը Կատարողի կողմից իրականացվում է Պատվիրատուի գրավոր դիմումի հիման վրա, որը պետք է ուղարկվի Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեին՝ ret@skillbox.team, ապա ուղարկվի նաև դիմումի բնօրինակը Կատարողի փոստային հասցեին՝ ՀՀ, ք.Երևան, Շինարարների 6/1, «ԳԱՐԱՆՏ» բիզնես կենտրոն, 2-րդ հարկ, 29-րդ տարածք:
Կատարողը իրավասու է պահանջել Պատվիրատուից լրացնել գումարի վերադարձի սահմանված ձևաչափով դիմումի ձևը:
12. Կանոնների 10.1 և 10.2 կետերով նախատեսված դեպքերում գումարի վերադարձը իրականացվում է այն չափով, որքանով այն մուտքագրվել է Կատարողի հաշվեհամարին՝ վերջինիս կողմից ծառայությունների մատուցման համար : Դրամական միջոցների փոխանցման ընթացքում վճարային կազմակերպությունների, բանկերի կամ վարկային կազմակերպությունների՝ Պատվիրատուից պահված միջնորդավճարները հանդիսանում են Պատվիրատուի կրած ծախսեր և ենթակա չեն վերադարձի Կատարողի կողմից:
13. Պատվիրատուի հետ փոխադարձ հաշվարկները կատարվում են այն նույն եղանակով, ինչով կատարվել է վճարումը՝ եթե վճարումը կատարվել է սեփական միջոցներով՝ գումարը վերադարձվում է Պատվիրատուի բանկային հաշվին, եթե վճարումը կատարվել է վարկային միջոցներով՝ գումարը վերադարձվում է համապատասխան բանկին (վարկային կազմակերպությանը):
Կատարողը չի փոխհատուցում Պատվիրատուի համար՝ վարկային պայմանագրով սահմանված տոկոսադրույքները, որոնք նա պարտավոր է վճարել ըստ վարկային պայմանագրի:
14. Եթե Պայմանագրով Ծառայությունների մատուցման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն / Օգտատերը կորցնում է հետաքրքրությունը ընտրված Դասընթացի նկատմամբ այնպիսի պատճառներով, որոնք պայմանավորված չեն Կատարողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա Պատվիրատուն կարող է դիմել վճարված գումարի մի մասի վերադարձի համար այն չափով, որը համամասնական է Օգտվողի Անձնական հաշվում տվյալ պահին արտացոլված տվյալներին դասընթացն անցնելու մասին, սակայն ոչ ավել քան վճարված գումարի 50%-ը:
Նման դիմումը համարվում է գնի փոփոխման դիմում՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440-րդ հոդվածի 2-րդ կետի: Այդ դեպքում Դասընթացի առցանց հասանելիությունը դադարեցվում է:
Եթե Ծառայությունները վճարվել են վարկային միջոցներով, ապա վերադարձի ենթակա գումարը հաշվարկվում է ըստ այն գումարի, որը Կատարողը փաստացի ստացել է:
15. Եթե Կատարողի կողմից Դասընթացի առցանց հասանելիության տրամադրումից անցել է 30 (երեսուն) օրացուցային օր, ապա գնի փոփոխություն և գումարի վերադարձ չեն իրականացվում:
16. Կատարողի կողմից գումարի վերադարձի պարտավորությունը համարվում է կատարված այն պահից, երբ գումարը դուրս է գալիս Կատարողի հաշվեհամարից: Վերադարձված գումարի՝ Պատվիրատուի հաշվին մուտքագրման ճշգրիտ ժամկետը կախված է Պատվիրատուի բանկային քարտը թողարկած բանկից և / կամ վարկային միջոցներ տրամադրած բանկից (վարկային կազմակերպությունից), եթե վճարումը կատարվել է վարկային միջոցներով:
17. Դասընթացի առցանց հասանելիությունը դադարեցվում է Կատարողի կողմից գումարի վերադարձի որոշման ընդունման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: